Գարեգին Նժդեհի անվան Հանրային գրադարան
Կիրակի
ՈՒՐԲԱԹ
02.11.2018

«Դեռ օդանավակայանից զգացի, որ մթնոլորտն ավելի հանգիստ է»

Կանադաբնակ ջութակահար Ռուբեն Կոսեմյանը կրկին հանդես կգա հայրենիքում

Նոյեմբերի 6-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կկայանա կանադաբնակ ջութակահար Ռուբեն Կոսեմյանի համերգը: Նրան կնվագակցեն Մարգարիտա Գրիգորյանը եւ Նատալյա Մնացականյանը: Ծրագրում՝ Մոցարտի ստեղծագործություններն են լինելու:

Նույն ծրագրով Ռուբենը եւ Նատալյան հանդես են եկել նաեւ Մոնրեալում: Ջութակահարը հավելեց, որ համերգը կձայնագրվի ճառագայթման կողմի նախաձեռնությամբ: Նրանից տեղեկացանք, որ թողարկվել է նաեւ Խաչատրյանական CD եւ նոյեմբերի 1-ից վաճառքում է: Այնտեղ զետեղված Արամ եւ Կարեն Խաչատրյանների գործերը նվագում են ինքը եւ **Նատալյա Մնացականյանը:**

CD-ն թողարկել է հանրահայտ Brilliant Classics-ը: *«Ուրախ եմ, որ կարողացա այդ խաչատրյանական երաժշտությունը նվագել որպես հայ ջութակահար»,*- «Առավոտի» հետ զրույցում հայտնեց Ռուբեն Կոսեմյանը: Նա տեղեկացրեց, որ որոշ համերգներ հետաձգել է Հայաստան գալու առիթով, քանի որ այս անգամ ավելի երկար է մնալու հայրենիքում:

«Իմ համագործակցությունը Ռուբեն Կոսեմյանի հետ շարունակվում է արդեն մի քանի տարի, այդ տարիների ընթացքում մենք պատրաստել ենք մեծ ու բազմաբնույթ երկացանկ, հաջողությամբ ելույթ ունեցել Կանադայի եւ Հայաստանի բազմաթիվ բեմերում, կատարելով տարբեր կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ինձ համար առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Ռուբենի հետ միասին ձայնագրված Արամ եւ Կարեն Խաչատրյանների ջութակի եւ դաշնամուրի համար ստեղծագործությունների ձայնասկավառակը: Մենք շատ ենք սպասում նաեւ այս համերգին, ինչը հնարավորություն է մեր հայ հանդիսատեսին ցույց տալու վերջերս կատարած մեր աշխատանքը»,- ասաց Նատալյան:

Մարգարիտա Գրիգորյանը եւ Նատալյա Մնացականյանը

Ռուբեն Կոսեմյանը նշեց, որ մտադիր է վարպետության դասեր անցկացնել հայաստանյան երաժշտական դպրոցներում, գուցե մի համերգ նվիրել մայրաքաղաք Երեւանի 2800-ամյակին:

Հարցրինք՝ չի՞ ցանկանում մասնակցել Երեւանում կազմակերպվող փառատոներին: *«Ունեմ ցանկություն, սակայն դեռեւս նման առաջարկ չեմ ստացել»,*-ասաց ջութակահարը: Ասաց նաեւ, որ մտադիր է համերգով հանդես գալ Գյումրիում:

«Ռուբենին վաղուց եմ ճանաչում,, շատ ուրախ եմ հանդես գալ նրա հետ, որովհետեւ հիանալի երաժիշտ է: Ռուբենը ինձ օգնում է, որպեսզի հետաքրքիր մեկնաբանենք ցանկացած գործ»,-ասաց **Մարգարիտա Գրիգորյանը:** Ջութակահարն էլ ընդգծեց, որ Մարգարիտայի հետ նվագելը ներդաշնակ է ստացվում, ինչը շատ կարեւոր է համատեղ ելույթի ժամանակ:

Ռուբեն Կոսեմյանից տեղեկացանք, որ ցանկություն ունի հանդես գալ նաեւ որեւէ նվագախմբի հետ, ասաց, որ այդ մասին մշակույթի նախարարության միջոցով տեղեկացրել է Հայաստանի ազգային Ֆիլհարմոնիկ նվագախմբին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբին եւ իմպրեսարիոյի միջոցով է տարիներ առաջ դիմել, սակայն երկու նվագախմբերից էլ արձագանք չի ստացել: Առաջիկա ծրագրերից էլ խոսեց, ասաց, որ «դրսի» պատվերով առաջիկայում պատրաստվում է ձայնագրել ջութակի 17 կոնցերտ

Մեր զրույցի ժամանակ հայաստանյան վերջին իրադարձություններին էլ անդրադարձ եղավ: Ռուբեն Կոսեմյանը հայտնեց, որ կանադական մամուլը շատ լավ է անդրադարձել հայաստանյան հեղափոխությանը: *«Երբ եկա Հայաստան, դեռ օդանավակայանից զգացի, որ մթնոլորտն ավելի հանգիստ է»,*-ասաց ջութակահարը: Հիշեցնենք, որ Ռուբեն Կոսեմյանն ամենասկզբում ուսանել է իր հոր՝ ճանաչված ալտահար Ալեքսանդր Կոսեմյանի մոտ: Մասնակցել է վարպետության դասերի Լեոնիդ Կոգանի, Իգոր Օյստրախի, Տիբոր Վարգայի, Ռուբեն Ահարոնյանի, ժան Տեր-Մերկերյանի, Իվան Մոնիգետիի, Դոմինիկ դը Վիլիենկուրի ղեկավարությամբ: 2010 թվականից ապրում է Կանադայում, որտեղ նրա առաջին կանադական ելույթը տեղի է ունեցել դիրիժոր Նուրիան Արմանի եւ Sinfonia Toronto նվագախմբի հետ՝ հանրահայտ Glenn Gould Studio-ում, այնուհետեւ Koerner Hall-ում: Որպես մենակատար Ռուբենը շարունակում է ելույթներ ունենալ տարբեր նվագախմբերի հետ՝ Կանադայում եւ արտասահմանում:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ